ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**N 130**

**« 20» « 12 » 2017թ.**

☎ (0-255) 6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.
Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ղեկավարի թիվ 32-Ա, 33-Ա, 34-Ա, որոշումները :

Առդիր՝ 4 թերթ :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
20.12.2017թ. գ.Սարամեջ Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՎԵՐԳԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

<<13>> դեկտեմբերի 2017 թվականի թիվ 32-Ա

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Սարամեջ համայնքի բնակիչ Վերգինե Գևորգյանին պատկանող 06-098-079-003 ծածկագրի տակ գտնվող 0.166 հա հողամասը և 105.4քմ. բնակելի տունը հասցեավորվել է՝ գ. Սարամեջ, 5 փողոց, թիվ 1 հասցեով:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (13.12.2017թ.) Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
էլ հասցե saramej.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2016 թվականի N 33-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ԲՅՈՒՋԵԻ ՆՈՒՅՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38–րդ հոդվածի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

Սարամեջ համայնքի 2017թ.-ի բյուջեի նույն դասակարգման հոդվածներում կատարել հետևյալ փոփոխությունններ.

1. 01.01.01.51 տնտեսական դասակարգման 4111 հոդվածից 301.0 (երեք հարյուր մեկ հազար) դրամ տեղափոխել նույն դասակարգման 4269 հոդվածին :
2. 01.01.01.51 տնտեսական դասակարգման 4214 հոդվածից 100000 (մեկ հարյուր հազար) դրամ տեղափոխել նույն դասակարգման 4264 հոդվածին :
3. 01.01.01.51 տնտեսական դասակարգման 4234 հոդվածից 64000 (վաթսուն չորս հազար) դրամ տեղափոխել նույն դասակարգման 4264 հոդվածին :
4. 01.01.01.51 տնտեսական դասակարգման 4232 հոդվածից 7600 (յոթ հազար վեց հարյուր) դրամ տեղափոխել նույն դասակարգման 4269 հոդվածին :
5. 01.06.01.01 տնտեսական դասակարգման 4241 հոդվածից 12000(տասերկու հազար) դրամ տեղափոխել նույն դասակարգման 4269 հոդվածին :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (15.12.2017թ.) Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ հասցե saramej.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2016 թվականի N 34-Ա

### ԳԱԳԻԿ, ՄԻՔԱՅԵԼ, ԱՐՏԱԿ, ԱՐՄԻՆԵ ՖԱՐՄԱՆՅԱՆՆԵՐԻՆ ԵՎ ԼԱՐԻՍԱ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42 և 43 հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ. Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքով, Հիմք ընդունելով հողամասի սեփականատերերի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 906845 վկայականը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 06.12.2017թ.թիվ 2155 վկայագիրը, անշարժ գույքի համար կազմված հատակագծերը :

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի 06-098-0063-0032 ծածկագրով 0.111հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 270.5քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 3.09քմ արտաքին մակերեսով կաթսայատունը, 32.05քմ արտաքին մակերեսով ղեղատունը, 35.59քմ պարիսպները և ճանաչել Գագիկ Սուրենի Ֆարմանյանի 1/3, Լարիսա Լեոնիկի Զաքարյանի 1/6,Միքայել Գագիկի Ֆարմանյանի 1/6,Արտակ Գագիկի Ֆարմանյանի 1/6 և Արմինե Գագիկի Ֆարմանյանի 1/6 ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը :
2. Վերը նշված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք :
3. Ինքնակամ կառուցված բնակելի կառույցների օրինականացման համար

սահմանված 136050.0 դրամ և հասարարական շինության համար 28210 դրամ վճարներ` 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած ։

4. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում ։

5. Թիվ 906845 վկայականով սեփականության իրավունքի պետական գրանցում ստացած ավտոտնակը քանդվել է` գոյություն չունի ։

6. Համայնքի կողմից ներկայացված սեփականաշնորհման քաղվածքում Միքայել Գագիկի Ֆարմանյանի փոխարեն սխալմամբ նշված է եղել Միքաել Գագիկի Ֆարմանյան ։

7. Անշարժ գույքի սահմաններում որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով ։

8. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե` 5-րդ փողոց տուն 8

9. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում ։

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (20.12.2017թ.) Կ.Տ